ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 335 – Ա 06 սեպտեմբերի 2019 թ.

ՎԵՐԳԻՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2019 թվականի մայիսի 10-ի 42/44.2/22078-2019 գրությունը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ /ծածկագիր՝ 64-2.1-6/ Վերգինե Ղուկասյանին 2019 թվականի սեպտեմբերի 9-ից սեպտեմբերի 20-ը ներառյալ, գործուղել ք.Երևան՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնում պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող փաստաթղթերի հետ աշխատող ղեկավար և մասնագիտական պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների համար կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելու:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

06.09.2019

ՄԱՐԶՊԵՏ

Digitally signed by SAMVELYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ